

ԱԶԳԱՅԻՆՑ ՆԱԿԱՆՁԻ ԹԵՄԱՆ ՆԵՆՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
«ԶԱԲԵԼ» ՎԵՊՈՒՄ՝

Նենսի Գրիգորյանն ամերիկահայ անգլիալեզու այն գրողներից է, որոնք որոշակի հետադիժ են թողել արդի ամերիկյան գրականության մեջ, դարձել ազգային ինքնության պահպանման առաջամարտիկներից մեկը, հնչեցրել նահանջի ահազանգը:

Հոգիվածի նպատակն է քննական հայացքով ներկայացնել ազգայինից նահանջի նյութի արծարծումը Նենսի Գրիգորյանի «Զաբել» վեպում, բացահայտել ստեղծագործության ներքին շերտերը, ամերիկահայության տագնապաները, ազգային արժեհամակարգից սնունդ առնող հայոց դիմադրական ոգին: Փորձ է արվել մատնանշել գրողի տեղն արդի ամերիկյան գրականության մեջ, նրա ունեցած դերն ազգապահպանության գործում, քաղաքացիական եւ հայրենասիրական մղումները:

Նենսի Գրիգորյանը նահանջին դիմագրավելու ճանապարհին կարեւորում է ժողովրդի ազգային դիմագծերի պահպանումը, պայքարի ու ընդվզման արտահայտությունը: Գրողը նահանջող բարքերի դեմ զգաստության կոչ է հնչեցնում:

Նորօրյա մարտահրավերների, լինելության բարդ իրավիճակների պայմաններում վեպի նյութը հատկանշվում է արդիական հնչողությամբ:

Ինչպես ամերիկահայ մյուս անգլիագիր գրողների, այնպես էլ Նենսի Գրիգորյանին մտահոգում է աշխարհասփյուռ հայության նահանջը: Իր վեպով գրողը փորձում է կանխել այդ նահանջը՝ կարեւորելով հայ

* Ստացվել է՝ 24.06.2023, գրախոսվել է՝ 29.06.2023:

էլ. հասցե՝ hasmibakurgalstyan@mail.ru:

ավանդական ընտանիքի, ազգային էության, ավանդական մտածելակերպի պահպանումը: Վեպի հիմքում Ն. Գրիգորյանը դրել է ազգային ինքնության պահպանման խնդիրը, որն առավել էական է հայրենիքից կտրված հայերի համար, որոնք կամա թե ակամա դառնում են ուրիշ մշակույթի մի մասը, ընդունում են օտարի վարքն ու բարքը, սովորույթները՝ հեռանալով ազգային արմատներից: Վեպը փորձ է կանխելու նահանջը:

Հոգվածում կիրառվել են պատմահամեմատական մեթոդը եւ գրական երկերի համակարգային ու ամբողջական վերլուծության սկզբունքը, օգտագործվել են ժամանակակից ուսումնասիրություններն ու ձեռքբերումները:

Նենսի Գրիգորյանը «Զաբել» վեպում, հնչեցնելով նահանջի ահազանգը, կարեւորել է ազգային ինքնության պահպանումը, դիմակայել նահանջին՝ ձգտելով արթմնի պահել ազգային ինքնության զգացումը:

Նահանջի գաղափարական եւ գեղագիտական հարցադրումները կազմում են սփյուռքահայ գրողների ստեղծագործության առանցքը: Օտարագիր հայ գրողները ցավով են նկատում, որ ժամանակն ու միջավայրը հեռացնում են հային ազգային արժեքներից. եւ օտար բարքերը, եւ կենցաղը աստիճանաբար դառնում են կենսաձեւ, դուրս է մղվում մայրենին, փոխվում են բարոյական ընկալումները: Մտահոգիչ է իրողությունը: Ահա այս ցավոտ հարցադրմանն են արձագանքում օտարագիր հայ գրողների երկերը: Նրանք լրացնում եւ ամբողջացնում են 20–30-ական թթ. Ֆրանսիայում ձեւավորված՝ Նահանջի գաղափարաբանությունը նոր հերոսներով ու նոր մանրամասներով, նկատելի սրությամբ ընդգծում սոցիալական գործոնը, առաջադրում ազգային կենսապայքարի հնարավորություններ: Փիթեր Սուրյանը, Փիթեր Նաչարյանը, Նենսի Գրիգորյանը եւ ուրիշներ ակամա դարձան Նահանջի գրականության հետեւորդներ, գրականություն, որը միտված էր եւ միտված է դիմագրավելու նահանջին, սթափեցնելու օտար ավերում հաճող հայորդիներին, նրանց հետ բերելու դեպի ազգային ակունքները: Նրանց վեպերը սփյուռքահայության կյանքը պատկերող լավագույն գործերից են, որտեղ գրողները պարզորոշ ընդգծում են նոր աշխարհի «օրենքները», բարոյական չափանիշները, հայի ներքին դրաման՝ հին ու նոր կյանքի համադրությամբ եւ նյութական եւ հոգեւոր շահագրգռություններով: Որտեղ էլ ապրեն եւ ստեղծագործեն օտարագիր հայ գրողները, նրանք

իրենց ստեղծած գրականությունում հետամուտ են լինում ազգային ինքնության, ազգային ոգու պահպանմանը, առանց որի Սփյուռքում հայը, որն իր ոտքերի տակ չունի ազգային հող, դարերով մշակված կենցաղ, ազգային միջավայր, ըղձական հայրենիքի տեսիլ, դատապարտված է ձուլման եւ վերացման:

Ազգային ինքնության նյութին է անդրադարձել նաեւ Նենսի Գրիգորյանը «Զաբել» (“Zabelle”) վեպում, որը 1998 թվականին հրատարակվել է Նյու Յորքում, ապա 2007 թվականին հայերեն թարգմանությամբ լույս է ընծայել ՀԳՄ հրատարակչությունը:

«Երբ այն առաջին անգամ տպագրվեց 1998-ին,— գրում է հեղինակը,— մեծ ժողովրդականություն ձեռք բերեց: Զաբելը տատիկն էր, որին բոլորը շատ էին սիրում: Հայ համայնքը շատ ջերմ ընդունեց գիրքը, այն շատ լավ արձագանք գտավ նաեւ գրողների շրջանում: Իմ գրքի ներկայացման շրջագայությունը հիանալի անցավ ԱՄՆ-ում, որոշ թարգմանություններ վաճառվեցին, ապա միջոցառումներ իրականացվեցին գրքի հոլանդերեն, ինչպես նաեւ գերմաներեն թարգմանությանն աջակցելու նպատակով: Այնքան հետաքրքիր էր լինել այս բոլոր քաղաքներում, երկրներում եւ տեսնել մարդկանց, որոնք նման էին իմ ընտանիքին, մարդկանց, որոնց հետ մեծացել էի իմ եկեղեցում ու համայնքում՝ Ուոթերթաունում: Վեպը թարգմանվել է թուրքերեն եւ հրատարակել է Pencere հրատարակչությունը՝ «Զաբել» վերնագրով (2003)»²:

Նենսի Գրիգորյանը 1998 թվականի ամռանը, մասնակցելով «Հայկական ժառանգության շրջագայություն» կոչվող ուղեւորությանը, շրջել է ողջ Անատոլիայում՝ իր տատի՝ «Զաբել» վեպի գլխավոր հերոսուհու հետքերով: «Մենք այս ուղեւորությունը անվանում ենք «ուխտագնացություն»,— ասում է վիպագիրը,— իսկ ինքներս մեզ՝ «ուխտավորներ»: Բայց դա ոչ մի կապ չունի ուխտագնացության հետ: Դա իսկապես դիմադրության ձեւ է, դիմադրություն՝ այս երկրից ջնջվելու, անհետացման եւ ժխտման դեմ»³: Նենսի Գրիգորյանին նախախ-

² Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Ամբողջացնել Սփյուռքի քառյակը, «CivilNent: Լուրեր Հայաստանից» լրատվական գործակալություն, Երեւան, 2013, 27 Հուլիս: էլ. հղում՝ www.civilnet.am/news/122619/ամբողջացնել-սփյուռքի-քառյակը/ (մուտք՝ 18. 09. 2021):

³ ՏԷՍ N. KRICORIAN, Just because both sides have suffered, it doesn't mean that the pain is “mutual”. Agos. Weekly newspaper. Istanbul, 2014, 26 September. էլ. հղում՝ <https://www.agos.com.tr/en/article/8109/nancy-kricorian-just-because-both-sides-have-suffered-it-doesnt-mean-that-the-pain-is-mutual>:

նամուծությունն ասես վերապահել էր ազգի պատմական հիշողության բանախոսը լինելու առաքելությունը, որպեսզի հետագա սերունդներին ու աշխարհին պատմեր հնագույն ու քաղաքակիրթ մի ժողովրդի՝ իր պատմական բնօրրանում բնաջնջվելու, հրաշքով ողջ մնացածների աշխարհով մեկ սփռվելու, նրանց դիմակայությունների ու նահանջի պատմությունը:

Ամիսներ անց Ն. Գրիգորյանը գրում է «Զաբել» վեպը եւ այն նվիրում տատի՝ Մարիամ Խոջաբաբյան-Գրիգորյանի հիշատակին: «Իմ առաջին վեպը՝ «Զաբելը»,— վկայում է հեղինակը,— գեղարվեստական ստեղծագործություն է, որը կառուցված է տատիկիս պատմության վրա, բայց դա ամբողջովին տատիկիս պատմությունը չէ. դա գեղարվեստական ստեղծագործություն է, որը վերցված է տատիկիս պատմած պատմություններից, եկեղեցում լսած այլ պատմություններից եւ այն կտորներից, որոնք գրել եմ՝ ոգեշնչված այս պատմություններից»⁴:

Ընտանեկան պատումը սերնդապահական հատկանիշ ունի եւ ազգային հավաքական նկարագրի ներուժ: Դա, հավանաբար, գալիս է նրանից, որ ընտանիքի պահպանության գործունը դարեր շարունակ հայերի համար ունեցել է համազգային դեր ու նշանակություն: Եղեռնի եւ տարագրության շրջանում՝ առավել եւս: Ընտանիքի փրկությունը եւ ազգի փրկությունը անքակտելիորեն կապված էին իրար: Ազգի հիմքում ընկած է ընտանիքը, որքան ամուր ու հզոր է ընտանիքը, նույնքան ամուր եւ հզոր է ազգը:

Գրողի տատը ծնվել էր Մերսիմում, պապը՝ Ադանայում: Անցնելով Թորոսի լեռների մոտով՝ գրողը տեսնում է Մերսիմի, Տարսուսի եւ Ադանայի ճանապարհային նշանները: Ուղեկցորդից տեղեկանում է, որ երբեմնի հայաշատ Մերսիմում հայերի հետքեր անգամ չեն մնացել: Ամեն ինչ անհետացել է: Ո՛չ եկեղեցի, ո՛չ դպրոց, ո՛չ մի բան: Ադանայում գրողն այցելում է հին հայկական թաղամաս, որտեղ որոշ նեղ փողոցներում դեռ պահպանվել են հին ժամանակների հիշատակները, ժԹ. դարում երկու հայ ճարտարապետների կառուցած Մեծ ժամացույցի աշտարակը, որի մոտ 1909 թվականին Ադանայի ջարդերը կազմակերպելուց առաջ հավաքվել էր թուրքական ամբոխը եւ կոտորել ավելի քան երկու հազար հայի: Այստեղ եւս հայկական եկեղեցիներից եւ հայկական դպրոցներից ոչ մեկը կանգուն չէ: «Սա եւս մեկ վայր է,— ցա-

⁴ Անդ:

վով փաստում է Նենսի Գրիգորյանը,– որտեղից մենք ամբողջությամբ ջնջվել ենք»⁵:

Անգլիագիր վիպասանուհին Փիթեր Բալաքյանի, Հովհաննես Փիլիկյանի, Արլեն Կրտսերի նման բարձրացնում է պատմական արդարության եւ պատժելիության հարցերը: Հատկապես նրան խոցում է «Մեր ընդհանուր անատոլիական ցավը» խոսույթը, որը, ինչպես նշում է գրողը, նշանակում է «դուք տուժել եք, եւ մենք՝ նույնպես», ապա ավելացնում է. «Միայն այն պատճառով, որ երկու կողմերն էլ տուժել են, դա չի նշանակում, որ ցավը փոխադարձ է: Եթե մենք ցանկանում ենք փոխըմբռնման գալ, ապա առաջին հերթին ճշմարտությունը պետք է ի հայտ գա: Կա նաեւ հարստության զանգվածային տնօրինման եւ փոխանցման հարցը, որի մասին չի խոսվում, բացառությամբ տառապանքի»⁶:

Գրողների այս սերունդը ատելությամբ է լցված թուրքերի հանդեպ՝ նրանց կատարած վայրագությունների, անմարդկային արարքների պատճառով, որոնք բանական մարդու ուղեղում չեն տեղավորվում, եւ համաշխարհային հանրության նկատմամբ՝ վերջինիս անտարբերության ու անարդարության համար: Նրանք թեեւ չեն տեսել եղեռնը, բայց զգում են արյան միջով փոխանցվող եղեռնի ցավը, իրենց ստեղծագործություններով ազգային ինքնությունն ու արժանապատվությունը պահպանելու, ազգային խնդիրները լուծելու համար պայքար են մղում եղեռնագործների ու աշխարհի շարիքի դեմ: Հայ գրողի զենքը գիրն է: Ազգերի մարտահրավերների այս խառնակ ժամանակաշրջանում հզոր տերություններին կուլ չգնալու, չծուլվելու, ազգային նկարագիրը, ինքնությունը չկորցնելու համար այսօր առավել, քան երբեւե անշափ կարեւոր է ազգային գոյության պահպանումը, որի դժվարին, բայց ազգանվեր գործին էլ լծված են օտարագիր հայ գրողները:

Վեպի նյութը պատմական հիշողությամբ վերականգնված իրականությունն է՝ եղեռնը վերապրած եւ որբացած հայ աղջնակի կյանքի պատմությունը:

Դլխավոր հերոսուհին Նենսի Գրիգորյանի տատիկն է՝ Մարիամ Խոջաբաբյանը, որ վեպում հանդես է գալիս Զաբել անունով: Գրողը միտումնավոր փոխել է հերոսուհու անունը՝ նրան տալով հավաքական

⁵ Անդ:

⁶ Անդ:

կերպարի հատկանիշներ: Պատահական չէ, որ սփյուռքահայ եւ օտարագիր գրողները հաճախ են դիմում ինքնակենսագրական պատումին: «Դրողը, – ինչպես նկատում է Ս. Դանիելյանը, – ենթագիտակցօրէն, մասունքների կորստեան վախից մղւում է արթնացնելու սրբացած յիշատակներ»⁷:

Զաբելը մեկն է այն հազարավոր որբերից, որոնք ապրեցին եղեռնը, որոնց հիշողութեան մեջ գամված մնացին մահվան, սովի, հալածանքի պատկերները: Կյանքի մայրամուտին հասած հերոսուհուն անընդհատ հետապնդում է դաժան անցյալը՝ իր մահասարսուռ պատկերներով. «Զաբելը երազում տեսնում էր ոսկոր ու կաշի դարձած մանուկներին, սեւ ու դարչնագույն ստվերներ, սարսափելի դեղնածատամներ եւ աչքեր: Փայտացած թեւերն իրար էին պարզած: Նրանց ափերի մեջ մեկական բրնձահատիկ էր դնում, բայց էլի էին պահանջում, շուտով դուրս սողաց հնամենի վախը եւ սկսեց գաղտագողի թափառել սենյակում»⁸: Քանի տարեկան էր, հաստատ չգիտեր, երեխա ժամանակ գաղթի ճանապարհին հարազատների հետ կորցրել էր նաեւ ծննդյան տարեթիվը:

Հեղինակը ներկայացնում է Զաբելի եւ բախտակից ընկերուհու՝ Արսինեի, որի հետ կտրել անցել էր եղեռնի ճանապարհը, ընտանեկան եւ ընկերային միջավայրերը, երկու տարբեր սոցիալական աշխարհներ՝ իրենց ըմբռնումներով, բարոյական վարքագծով: Բուն գործողությունները ծավալվում են Զաբելի ընտանեկան միջավայրում, որտեղ կենտրոնական տեղ է զբաղեցնում հերոսուհու տառապանքներով լեցուն կյանքը: Մահ ու եղեռն տեսած, որբանոցից որբանոց ընկած, թրջացումից փրկված հերոսուհին չի կորցրել կյանքի նկատմամբ իր սերն ու հավատը: Շնորհիվ բարեպաշտ հայերի եւ հոգեւոր թեմի ջանքերի՝ վերագարձել է հայկական համայնք: Գրողի մեկնակետով ազգի փրկությունը միասնության, միմյանց նկատմամբ տածած հավատի եւ սիրո մեջ է: Հերոսուհին միայնակ չէ այս աշխարհում, նրա կողքին են իր համայնքը, հոգեւոր թեմը, որոնք սատարում են յուրաքանչյուր որբացած հայի, նեցուկ լինում, ամեն գնով ջանում պահպանել նրա ազգային ինքնությունը՝ հեռու պահելով պարտադրված օտարացումից:

⁷ Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ, *Սփյուռքահայ վէպը, Անթիլիաս, 1992, էջ 189*:

⁸ Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ, *Զաբել, Երեւան, 2007, էջ 5*:

«Վանականը կանգ առավ եւ աչքերիս մեջ նայեց:

– Սիրելի՛ աղջիկս, անհանգստանալու կարիք չկա: Սրանք հայեր են, որ մեզ են միացել՝ իմանալով, որ ճանապարհովում ենք հայ աղջիկ գտնելու: Այժմ ապահով ես, ազգակիցներիդ շրջանում»⁹:

Ազգային ինքնությունը պահպանելու համար առաջին կարեւոր գործոնը, որ արժեւորում է գրողը, մայրենի լեզվի պահպանումն է եւ հավատքը: Պատահական չէ, որ վեպի հերոս վանականը դեռահաս աղջկան խորհուրդ է տալիս սովորել մայրենին, սրբորեն պահել լեզուն եւ հավատը, ապա նրան նվիրում է Աստվածաշունչ՝ ասելով՝ «Սկսիր ամենասկզբից»¹⁰: Վանականի խոսքերը նոր ուժ ու կորով են հաղորդում դեռահասին՝ սկսելու նոր կյանք՝ անցյալում թողնելու վիշտն ու սարսափը: Վեպի ազգանվեր կերպարներից է Տիկին Տեր-Ստեփանյանը, որի ջանքերով բազում հայ մանուկներ փրկվել են թրքացումից: Նա մեկն է այն հարյուրավոր հայ կանանցից, որոնք, հանուն ազգի շարունակականության, պատրաստ են զոհաբերել իրենց կյանքը: Նրա շնորհիվ հերոսուհին նոր կյանք է սկսում, մեկնում է Ամերիկա, ամուսնանում ավանդապահ հայորդու հետ՝ «ամուր վեմի» վրա ընտանիք ստեղծելու ակնկալիքով: Նենսի Գրիգորյանը, Վիլյամ Սարոյանի, Փիթեր Նաչարյանի, Փիթեր Սուրյանի եւ այլոց հետեւողությամբ, ազգային բարքերի պահպանության նախահիմքը համարում է ընտանիքը, մի հանգամանք, որն ըստ նրա՝ պայմանավորում է սփյուռքահայության հետագա հայեցի ընթացքը: Վեպում գրողը բարձր դեր է վերագրել հայ մայրերի գործոնին: Զաբելը՝ աստվածաբարո այդ կինը, չնայած ապրած դժվարին կյանքին, որդիներին իր շուրջն է համախմբել, դաստիարակել նախնիների ոգով՝ սերմանելով բարություն պատգամը: Ավագ որդին՝ Մովսեսը, ուսում ստանալով Զիկագոյի հոգեւոր դպրոցում, դառնում է քարոզիչ, Կալիֆոռնիայում հոգեւոր դասեր է տալիս, Աստվածաշունչ քարոզում: Նոր միջավայրը, նոր զգլխիչ բարքերը նրան առնում են իրենց հորձանուտի մեջ: Բավական չէ, որ Մովսեսը փոխում է իր ազգանունը, այլեւ հեռանում է մայրենի լեզվից, ամուսնանում ամերիկուհու հետ, զավակներ ունենում, Արլեն հոր նման գաղտնի պահում իր հայ լինելը, անգամ այցի չի գալիս մորը: Նահանջի երեւույթը գրողը ներկայացնում է որպես համազգային աղետ: Նահան-

⁹ Անդ, էջ 23:

¹⁰ Անդ, էջ 32:

ջուժ են բոլորը, նույնիսկ՝ հոգեւորականութիւնը: Հայ լինելը նախատինքի պէս են ընկալում շատերը՝ անգամ հոգեւորականները՝ ի դեմս Մովսէսի՝ Զարլզ Ավետարանիչի: Եթէ դարասկզբին հոգեւորականութիւնը պատվար էր սփյուռքահայերի համար, կոշված էր հայապահպանութեան վեհ գործին, այսօր հետ է նահանջել իր դիրքերից: Դիպուկ է նկատում կրտսեր որդի Զեքը. «Հայերն այսպէս են վերանալու, սկզբում տեղահանեցին, հետո մեր զավակները կհրաժարվեն լեզվից, ի վերջո կամուսնանան օտարների հետ եւ կես-հայ զավակներ կունենան եւ վերջ»¹¹: Սա հեզնանք է, բայց եւ դառը ճշմարտութիւն:

Զաբելը, որ ամուր պատենէ է եղել հնի եւ նորի միջեւ, չի թողել, որ ապականող նորը ներխուժի ավանդապահ իր ընտանիքը: Նա մեծ ցավ է ապրում, որ ջանքերն իզուր են եղել, բայց եւ ինքն իրեն հուսադրում է, որ դեռ ամեն ինչ կորած չէ: Կրտսեր որդին՝ Զեքը, ընկնելով ընկերական վատ շրջապատ, ծնողների շնորհիվ դուրս է գալիս այնտեղից, ավարտում է ավագ դպրոցը եւ շարունակում հոր առեւտրական գործը: Չնայած ծնողների դեմ լինելուն՝ նա եւս ամուսնանում է ամերիկուհու հետ, ունենում զավակներ: Ի տարբերութիւն ավագ եղբոր զավակների՝ նրա զավակները խոսում են հայերէն, կրում են հայի ազգանուն, պահպանում են իրենց ազգային ինքնութիւնը, հայ են կոչվում, չեն ամաչում հայ լինելուց: Զոյը՝ միակ դուստրը, մոր կողքին է, սիրով է պարուրում նրան, նրա նպատակն է հայ ընտանիք ստեղծելը, հայ զավակներ լույս աշխարհ բերելը: Զաբելը միակը չէ, որի ավագ որդին հեռացել է հայութիւնից, նահանջել ազգայինից, ազգային ավանդույթներից, մտածողութիւնից, մայրենի լեզվից: Արսինէի որդին՝ Հենրին, եւս ընդունել է օտարի վարքն ու բարքը, սկսել է ուշ-ուշ այցելել մորը, չնայած շատ մոտ են ապրում: Նրա զավակները հաճախում են անգլիական դպրոց, խոսում են անգլերէն: Առաջին սերունդը, որն ի սկզբանե դեմ է եղել օտարացմանը, պայքարել է ազգային ինքնութեան պահպանման համար, ի վերջո տեղի է տալիս: Թե՛ Զաբելը, թե՛ Արսինէն չեն խոչընդոտում իրենց զավակների ամերիկացմանը, թեպէտ հոգու խորքում դեմ են դրան, միայն թե իրենց զավակներին մեկընդմիշտ չկորցնեն, իրենցից հեռու չվանեն:

« — Հիսունականներն են, Թորոս, եւ սա Ամերիկան է:

— Համոզված եմ, իրեն այդպէս է պահում, որովհետեւ քաջալերում ես:

¹¹ Անդ, էջ 115:

– Թորոս, մի՛ ճնշիր նրան, թե չէ կկորցնենք»¹²:

Գրողը ներկայացնում է հերոսների անօգուտ ու անհավասար մաքառումները, վեր է հանում բացասական այն բոլոր տեղաշարժերը, որոնք կատարվում են նրանց հոգեբանության մեջ: Ժամանակն իր բացասական դերն է կատարում, դժվարը լեզվից հեռացումն է, իսկ ազգայինից հեռացումը մոտ ապագայի խնդիր է: Նահանջի տրամադրությունները դառնում են տիրապետող հոգեբանություն, թափանցում են ընտանիք, բացահայտվում են անգամ առօրեական մանրուքներում: Նենսի Գրիգորյանն ու իր գրչակիցները ցույց են տալիս, թե ինչպես ցեղասպանության ականատեսների զավակներից ոմանք, չկարողանալով գնահատել անցյալը եւ դասեր քաղել դրանից, նահանջում են: Նրանց համար անցյալ, ազգային ցավ գոյություն չունեն, ներկան է առաջնայինը, իրենք բոլորն էլ այստեղ՝ Ամերիկայում, ամերիկացիներ են: Դիպուկ է նկատել Ս. Դանիելյանը. «Օտարածին հայ սերնդի վարքագծի եւ մտածողութեան մէջ ամերիկեան բարքն ու ապրելակերպը, արագ թէ՛ դանդաղ, ներծծւում են, դառնում տիրապետող, տարրալուծւում է արեան բաղադրութիւնը»¹³:

Օտարագիր հայ մյուս գրողների նման՝ Նենսի Գրիգորյանն իր ստեղծագործության մեջ արտահայտում է նահանջ երեւույթը՝ ներկայացնելով այն որպես համազգային աղետ, հայ ազգի բարոյական բնաջնջում եւ փորձում է դիմակայել դրան:

Նենսի Գրիգորյանը «Զաբել» վեպում պատկերում է հարազատ հողից կտրված հայի՝ օտար միջավայրում ազգային արմատներից աստիճանական օտարումը՝ նահանջը, ցեղասպանության ականատեսների զավակներից ոմանց՝ անցյալի ըմբռնման եւ գնահատման անկարողությունը, պատմությունից դասեր չքաղելու ցավալի իրողությունը, ամերիկացումը, ազգային արժեքների ուրացումը, հայ ազգի բարոյական նկարագրի խաթարումը՝ փորձելով գեղարվեստի ուժով հային հետ պահել ուժացումից եւ օտարացումից:

¹² Անդ, էջ 131

¹³ Ս. Դանիելյան, նշ. աշխ., էջ 233:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Նահանջ, ազգային ինքնություն, դիմակայություն, ընտանեկան պատում, սերունդ, վեպ, օտար եզերք:

РЕЗЮМЕ

Ненси Григорян, одна из тех американских англоязычных писателей армянского происхождения, которая оставила свой след в американской литературе. Она стала одним из пионеров в деле сохранения национальной идентичности и в своих произведениях показала тревогу по поводу её потери.

Цель статьи – представить тему потери национальной идентичности в романе «Забел» Ненси Григорян с исследовательской точки зрения, выявить и осветить задачи, формирующиеся во внутренних пластах творчества автора, показать моральные проблемы американских армян и дух армянского сопротивления, проникнутый национальной психологией.

Сделана попытка указать место писателя в американской литературе, роль в сохранении нации, представить гражданские и патриотические стремления автора.

В борьбе за сохранение национальной идентичности Ненси Григорян придавала большое значение особенностям армянского народа, что являлось призывом писателя против отступающей нравственности, выражением борьбы и сопротивления, ставшим впоследствии внутренним содержанием романа. В условиях сегодняшних вызовов и опасности экзистенциального существования армянского народа тема имеет особую актуальность.

SUMMARY

Nancy Kricorian, an American-Armenian English-speaking writer, who left her mark in the American literature, became one of the pioneers of preserving national identity and raised an alarm of retreat.

The purpose of the article is to present the theme of the loss of national identity in the novel of “Zabelle” by the American-Armenian English-speaking writer

Nancy Kricorian from a research point of view, to identify and highlight the tasks that are formed in the internal layers of the author's work, the moral problems of American Armenians and the spirit of the Armenian resistance, imbued with national psychology.

An attempt was made to indicate the writer's place in the American literature, her role in the preservation of the nation, the emphasized civic and patriotic aspirations. In the struggle for the preservation of national identity, Nancy Kricorian attached great importance to the national characteristics of the Armenian people, which was the writer's appeal against the retreating morality, an expression of struggle and resistance, which later became the internal content of the novel. In the context of today's challenges and the danger of the existential subsistence of the Armenian people, the topic is of particular relevance..

